ՈՍԿԱՆ.– (Ցած) Սաքո, Քաջ Նազա՛րն է: Սաքո, Քաջ Նազարն է…(Աչքով է անում եւ ցոյց տալիս Նազարի վրայ։)

ՍԱՔՈ.– (Բոլորովին շփոթուելով) Հա՛… հա՛… հա՛, է՛…

(Հանկարծ նկատելով Նազարի այլայլմունքը) Բը՛, բը՛, բը՛, բը՛…

ՆԱԶԱՐ.– (Նոյնպէս շփոթուած) Բը՛, բը՛, բը՛, բը՛:

ՍԱՔՈ.– Հա, է…Տո… Մի դրօշա՛կ էր ձեռին, թո՛ւր էր, ինչ էր… Որ մին վրայ չընկա՛ւ… այ ջանըմսըն Քաջ Նազար… Հիմի սա ո՞նց է տալի փորին, մէջքին, գլխին… գլխին, մէջքին, փորին…

ՈՍԿԱՆ.– Մենք էլ լաւ ճղեցինք,

ՍԱՔՈ.– Հա, բաներ շատ եղան… բը, բը, բը, բը… (Ցած ձայնով դիմում է իր կողքի ընկերներին) Ի՞նչ էք ասում, ո՞վ է, ի՞նչ է…

Ա ՀԻՒՐ.–

Բ ՀԻՒՐ.– Քաջ Նազարն է,

Գ ՀԻՒՐ.–

ՍԱՔՈ.– (Կասկածով նայում է Նազարին եւ նստում) Ասէք, էլի՛… բը՛, բը՛, բը՛…

ՆԱԶԱՐ.– (Նոյնպէս նստում է եւ կասկածով նայում Սաքոյին։)

ՀԻՒՐԵՐ.– Վերջը, ո՞նց եղաւ: Զարդողն ո՞վ էր:

ՍԱՔՈ.– Ո՞վ պիտի լիներ: Քաջ Նազարը… Մենք էլ կռուի մէջ էինք ու… (Իր կողքի նստողներին) Ո՞ր տեղի Քաջ Նազարն է:

ԿՈՂՔԻՆԸ.– Նազարաշէնի,

ՍԱՔՈ.– Հա՛, Նազարաշէնի Քաջ Նազարն է: Վա՛հ, ինչքա՛ն փոխուել է. միանգամից չճանաչեցի:

Ա ՀԻՒՐ.– Ճանանչ ես, հա՞,

ՍԱՔՈ.– Ո՞նց թէ ճանանչ ես, տնաշէններ, Դաղստանու կռուին հինգ տարի միասին ախպերութիւն ենք արել:

ՆԱԶԱՐ.– (Սպառնալի) Հը՛մ… (Նայում է Սաքոյին։ Սաքոն երեսը շուռ է տալի եւ կծկւում։)

ԹԱՄԱԴԱ.– Ճանա՞նչ ես, հա՞, Բա ձեն հանի, է՛…

ՀԻՒՐԵՐ.– Ճանա՞նչ ես, հա՞,

ՍԱՔՈ.– (Նազարին) Քաջ Նազա՛ր: Ինչ ես ասում: ճանա՞նչ եմ:

ՆԱԶԱՐ.– (Անորոշ ձայն է հանում եւ ձեռը թափ տալիս։)

ԹԱՄԱԴԱ.– (Նազարին) Քա՛ջ Նազար ախպեր: Բարով եկար: (Տեղ է տալիս նրան) Անունդ վաղուց էինք իմացել, մենակ քեզ չէինք տեսել: Հիմի մեզ համար մեծ բախտաւորութիւն է, որ տեսանք: